

ՎԱՎԵՐԻ ԲՐՅՈՒՍՈՎԸ ԱՆԴԻԿՈՎԱՍՍՈՒՄ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ

Ա. Ն. ԶԱՔԱՐՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Հայաստանի, հայ ժողովրդի հանդեպ ռուս մտավորականության աճող հետաքրքրության արտահայտություններից ու վկայություններից մեկը, ինչպես հայտնի է, Վալերի Յակովլևիչ Բրյուսովի կաղամած և խմբագրած «Հայաստանի պոեզիա» ժողովածուն է։ Արդեն մինչև «Հայաստանի պոեզիայի» ձևավորվելը, անվանի բանաստեղծը մեծ աշխատանք է ծավալել հայ բանաստեղծության մասսայականացման ուղղությամբ, մի գործ, որը իրողությունների ժամանակագրությամբ, հանգամանքներով ու նշանակությամբ քիչ է ուսումնասիրված։

Ամիսների քրտնաշան աշխատանքից հետո, երբ արդեն ժողովածուի վրա կատարվող աշխատանքը մոտ էր ավարտին և երբ ռուս գրական շրջաններում հայ պոեզիայի շուրջը առաջացել էր որոշակի հետաքրքրություն, 1915 թ. հոկտեմբերի 15-ին ռուս կողմից «Ազատ գեղագետների ընկերությունը» «Альфонская роща» ռեստորանի սրահներից մեկում կազմակերպում է երեկո՝ նվիրված հայոց բանաստեղծությանը։ Ընկերության անդամների, ռուս և հայ մտավորականության երկսեռ հասարակայնության համար Վ. Բրյուսովը հայ հին ու միջնադարյան և նոր բանաստեղծության մասին կարդում է ծավալուն դասախոսություն՝, որը լայն արձագանք է գտնում մասնավորապես Անդրկովկասի հայ գրական-հասարակական շրջաններում։ Բանախոսության վերաբերյալ տպագրվում են ընդարձակ հաղորդումներ՝ գրասեր հասարակայնության շրջաններում բորբոքելով խոսակցություններ, վեճեր։

Եվ, ահա՛, Բաբվի «Հայ գրասերների ընկերության» խորհուրդը 1915 թ. նոյեմբերի 21-ին՝ իր առաջին նիստում, որոշում է հրավիրել Վ. Բրյուսովին կրկնելու դասախոսությունը Բաբվում, գուցե և Թիֆլիսում²։ Նոյեմբերի 25-ին ընկերության նախագահ Տիգրան Հովհաննիսյանը և քարտուղար Յուլիա Խանգադյանը հղում են Բրյուսովին հրավեր-նամակ³։ Նշանավոր բանաստեղծը սիրով ընդունում է հրավերը՝ ցանկանալով մոտիկից ծանոթանալ հայ գրողների, մտավորականների հետ, տեղում տեսնել ժողովրդի նիստուկացը, կենցաղն ու հոգևոր կյանքը։ Դեկտեմբերի 26-ին նա հեռագրում է Տ. Հովհաննիսյանին և, շնորհակալություն հայտնելով, նշանակում դասախոսության օրը, ներկայացնելով նաև դասախոսության կարճառոտ ծրագիրը⁴։ Դեկտեմբերի 30-ին նամակում արդեն դասախոսության ծրագիրը շարադրում է ավելի մանրամասնորեն, միաժամանակ հայտնում, թե Մոսկվայից մեկնելու է հունվարի 4-ին և Բաբու է ժամանելու 7-ի առավոտյան⁵։

1 «Նշակ», 25, 29 հոկտեմբերի 1915: «Հորիզոն», 23 հոկտեմբերի 1915: Кавказское слово, 3 ноября 1915. Հանդիսավորությամբ բացելով երեկոն, Բրյուսովը ասել է. «Այժմ, երբ ես բնագրով ծանոթ եմ նարեկացուն, Աղթամարցուն, Նահապետ Քուչակին, Սայաթ-Նովային, Թումանյանին, Իսահակյանին, Մատուրյանին, Հովհաննիսյանին, Տերյանին և հայ մյուս բանաստեղծներին,— միայն այժմ եմ հասկանում, թե ինչպիսի թանկարժեք գանձ է թաքցվել ռուս հասարակայնությունից: Ինձ թվում է, թե մեր առջև փակ է եղել զարմանահրաշ գրախոսանող մի դուռ, որի գոյությանը մենք լիովին անտեղյակ էինք» (Кавказское слово, 3 ноября 1915): Երեկոյի երկրորդ մասում իրենց թարգմանություններն են կարդում Բրյուսովը, Վ. Իվանովը, Յու. Բալտրուշայտիսը, Յու. Վերխովսկին, Կ. Բալմոնտը:

2 «Հորիզոն», 1 դեկտեմբերի 1915:

3 ՀԱՍՏ «ԿԱ «ՏԵԼԵԿԱԳՐԻ» (հաս. գիտ.), 1959, № 5, էջ 83:

4 Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Տ. Հովհաննիսյանի ֆոնդ, № 264:

5 Նույն տեղում, № 80: Վ. Բրյուսովը Տ. Հովհաննիսյանին հղած մեկ այլ հեռագրում գրում է, թե Բաբու է ժամանելու հունվարի 3-ին (նույն տեղում, № 264):

Մինչև Վ. Բրյուսովի Բաքու դալը, քաղաքի մամուլի էջերում հրապարակվում են հողվածներ, որոնցով հաղորդվում են ընդհանուր տեղեկություններ նրա մասին, գնահատվում ձեռնարկած գործը, տպագրվում են նրա բանաստեղծություններից, կարգալիք դասախոսությունները:

Հարկ է ասել, որ Վ. Բրյուսովի՝ Անդրկովկաս կատարած ուղևորության և կարգացած դասախոսությունների մասին շրջանառության մեջ եղած տվյալները հակասական են. ոմանք գրում են, թե ուսու բանաստեղծն Անդրկովկաս է եկել Թիֆլիսի հայ գրողների ընկերության հրավերով (Թումանյանի նախաձեռնությամբ) և որ նա երկրամաս է ուղևորվել 1915 թ. դեկտեմբեր—1916 թ. հունվարին: Ուրիշների կարծիքով Վ. Բրյուսովը Բաքվում դասախոսություն է կարդացել հունվարի 18-ին, ըստ երրորդների՝ 1916 թ. գարնանը: Միևնույն հեղինակի հավաստումով անվանի բանաստեղծն Անդրկովկասում եղել է 1916 թ. ձմռանն ու գարնանը, բայց Բաքվում դասախոսություն է կարդացել 1915 թ.: Ճիշտն այն է, որ Վ. Բրյուսովը Անդրկովկաս, նախ Բաքու է եկել, ինչպես տեսանք, տեղի «Հայ գրասերների ընկերության» խորհրդի հրավերով՝ 1916 թ. հունվարի 7-ին:

Եվ այսպես, 1916 թ. հունվարի 7-ին Բաքվում հայ հասարակայնությունը Հովհաննես Հովհաննիսյանի գլխավորությամբ ընդունում է Վալերի Բրյուսովին: Հաջորդ օրը՝ հունվարի 8-ին, Մայիլյանների լեի-լեցուն թատրոնում նա կարդում է «Հայոց բանաստեղծությունը» վերնագրով Անդրկովկասում կայանալիք իր առաջին դասախոսությունը: Գրասերների ընկերության անունից Վ. Բրյուսովին ողջունում է հայ բանաստեղծներից ամենաավագը՝ Հովհաննես Հովհաննիսյանը, որի ելույթը, ըստ էության, ռուս գրականության, ռուս ժողովրդի դերին ու նշանակությանը վերաբերող սրտի խոսք ու խոստովանություն է: Մոսկվայի լադարյան ճեմարանում ռուս և հայ գրականության ավանդներով դաստիարակված, մեծ կուլտուրայի տեր Հովհաննիսյանը ի դեմս Բրյուսովի ողջունում է ռուս գրականությանը, որով «սնվել ու սնվում է հայկական երիտասարդ բանաստեղծությունը, որով կրթվում է Ռուսաստանի ուսումնածառավ հայ բնակչությունը»⁶: Միաժամանակ արժանին է մատուցվում բանաստեղծ ու մաւրդ Բրյուսովին՝ «...որ մեր այս ծանր նեղակերության պահին այնքան համակրություն ցույց տվեց մեր տառապալ ազգին: Մեծ է Ձեր մեղ արած ծառայությունը և մանավանդ գնահատելի այժմ, երբ մենք այնքան կարոտ ենք մաքուր աղբյուրից բխած ուղղամիտ դատաստանի: Իսկ ո՞ր աղբյուրը կարող է ավելի մաքուր լինել, քան ազգային ստեղծագործությունը, որի մեջ արտահայտվում է ամեն մի ազգի ամբողջ բարոյական կերպարանքը, ամբողջ հոգևոր կյանքը: Ձկա այնպիսի վարձատրություն, որ բավական համարենք մենք այն ձեռնարկության համար, որի գլուխն եք անցել Դուք. ձեռնարկություն, որի նպատակը ռուս հասարակությանը համեստ հալ մուսայի բազմադարյան ստեղծագործության ծանոթացնելն է»⁷: Ապա Հովհաննիսյանը կարդում է ռուս բանաստեղծին նվիրած սրտաբուխ սոնետ՝ նրան մատուցելով իր բանաստեղծությունների հատորը, հետևյալ մակագրությամբ՝ «Սիրելի Վալերի Յակովլևիչ Բրյուսովին՝ հայ պոեզիայի բարեկամին, բարի հիշատակ»:

Նամուլի հաղորդումով, իր բանախոսությունը Բրյուսովը սկսում է հայոց բանաստեղծության հնօրյա անցյալից, ապա դառնում նրա զարգացման շրջաններին, առանձնահատկություններին ու հեռանկարներին: Բանախոսության ընթացքում թարգմանաբար կարդում է հատվածներ հին և նոր նշանավոր բանաստեղծների ստեղծագործություններից, իսկ վերջում՝ իր «Հայաստանին» բանաստեղծությունը⁸:

Դասախոսությունից հետո հասարակայնությունը հոտնկայա շնորհակալություն է հայտնում բանաստեղծին, նրան ծաղիկներ մատուցում: Այս ամենից հետո, ուշ երեկոյան «Հայ գրասերների ընկերությունը» «Մետրպոլ» հյուրանոցում կազմակերպում է հանդիսավոր ընթրիք: Ընկերության նախագահ Տ. Հովհաննիսյանի՝ երախտագիտության և գնահատանքի խոսքից հետո, ասվում են մի շարք բաժակաճառեր: Պատասխան խոսքում Բրյուսովը շնջտում է, որ «հա-

6 «Արև», 10 հունվարի 1916:

7 Նույն տեղում:

8 Նույն տեղում: Վ. Բրյուսովի կարգացած այս և հետագա դասախոսությունների բովանդակությունը, ըստ մամուլի տվյալների, ընդհանուր առմամբ ամբողջովին համապատասխանում է «Հայաստանի պոեզիա» ժողովածուի բազմիցս արձարծված առաջաբանին, ուստի և հարկ չկա դրանց անդրադառնալու:

յությունը բարձր արժեքներ է արտադրել և նրանով կարող են պարծենալ մեծ ազգերը ևս⁹, այդ իսկ պատճառով էլ, նշում է նա, հայ գրականության թարգմանության դործին են նվիրվել Մ. Գորկին, Ալ. Բլոկը, Կ. Բալմոնտը, Վ. Իվանովը և ուրիշներ: Ընթերթի մասնակիցները միահամուռ ոգևորությամբ շնորհակալության հեռագիր են հղում նրանց¹⁰: Երբ հայաստանում հեռագրում ասված է. «Վալերի Բրյուսովի պատվին տրված ճաշկերույթի մասնակիցների հանձնարարությամբ հղում ենք Ձեզ մեր խորին երախտագիտությունը՝ հայ ժողովրդի հոգևոր ստեղծագործությունը մտածող Ռուսաստանին ծանոթացնելու Ձեր շնորհակալ գործի համար, ժողովուրդ, որն իր ճակատագիրը անխզելիորեն կապել է ռուս մեծ ժողովրդի ճակատագրի հետ»¹¹:

Հիշարժան է նաև, որ ճաշկերույթին ընթերցվում է Վահան Տերյանի և Պողոս Մակինցյանի՝ Երևանից Վ. Բրյուսովին հասցեագրված այս հեռագիրը. «Նախական երկրից ջերմ և սրտագին ողջունում ենք մեր թանկագին հյուր Վալերի Յակովլևիչին և քնքշորեն գլուխ խոնարհեցնում Իրաննա Մատվենայի առջև»¹²:

Բարձրում եղած օրերին, ըստ երևույթին, մի բանի անգամ Բրյուսովը հյուրընկալվել է Հովհաննիսյանների ընտանիքում: Այդ այցելություններից մեկի մասին Ց. Խանդավյանի կնոջ հուշերից տեղեկանում ենք. «Վալերի Յակովլևիչը իրեն պահում էր հասարակ. խոսակցությունը գնում էր ուռու ու հվրոպական գրական նորույթների շուրջը. Հովհաննիսյանի որդիներից մեկը շատ էր տարված պոեզիայով, անգիր գիտեր բազմաթիվ բանաստեղծություններ Պուշկինից, Խեքն էլ մի քիչ գրում էր: Բրյուսովը նրան խնդրեց արտասանել որևէ բան: Սրբ պատանին վերջացրեց, Բրյուսովը սկսեց բանաստեղծին սկսեց խորհուրդներ տալ, ...որքան շատ պետք է սովորել, իմանալ ռուս և արտասահմանյան գրականություն և որքան սկսեց է սխտանատրիկաբար գոնե մեկ բանաստեղծություն գրել ամեն օր և անվերջ աշխատել պոեզիայի ուսումնասիրության ասպարեզում»¹³:

Այս այցելություններից մեկի ժամանակ էլ, թերևս, ռուս բանաստեղծը Հովհաննիսյանին է նվիրել իր բանաստեղծությունների գիրքը՝ «Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանին» ի նշան խոր երախտագիտության այն ուրախության համար, որ պատճառել է ինձ նրա ստեղծագործությունը. Բաբու, 1916»:

Ակնհայտ է Հովհաննիսյանի և Բրյուսովի փոխադարձ ջերմությունը միմյանց հանդեպ, որ վկայում է Իրաննա Բրյուսովան: «Բրյուսովի հանդիպումը Հովհաննիսյանի հետ, — գրում է նա, — կարելի է ասել, երկու մոտ մարդկանց հանդիպում էր: Հետագայում կապը պահպանվում էր բարեկամական նամակագրությամբ: Վալերի Յակովլևիչը ինձ մեկ անգամ չէ, որ ասել է, թե զնահատում է Հովհաննիսյանի բանաստեղծական շնորհը և անընդհատ կրկնում էր. «Հովհաննիսյանը իսկական բանաստեղծ է»¹⁴:

Այդ առանձնակի մտերմությունը ենթադրում է ստեղծագործական-խառնվածքային հարազատություն, որի վրա ժամանակին ուղադրություն է հրավիրել Ա. Տերտերյանը: Նա, որ եղել էր Բրյուսովի դասախոսության ունկնդիրը Երևանում և խորապես գիտեր Հովհաննիսյանի ստեղծագործությունն ու անձը, իրավացիորեն նկատում է, թե նրանց «փոխհարաբերության մեջ մի ինտիմ մոմենտ կա, որ պետք է առանձնապես շեշտվի: Մեզ թվում է, որ Բրյուսովը հայ բոլոր բանաստեղծների մեջ ամենից շատ իրեն հառազատ է զգացել Հովհաննես Հովհաննիսյանի հետ: Հարազատ է զգացել Հովհաննիսյանի ժանրային ստեղծագործությանը, պատմական հերոսական, տաղաչափական վարպետությանը և լեզվական օրինակելի կուլտուրային: Ինքը Բրյուսովն էլ ռուս պոեզիայի մարզում առանձնապես աչքի է ընկել հենց այս շորս առանձնահատկությամբ»¹⁵: Միանգամայն ճիշտ նկատված այս ընդհանրությունները մեկ առ մեկ կարելի է մատնացույց անել մեկի և մյուսի ստեղծագործության մեջ:

⁹ Նույն տեղում:

¹⁰ «Մշակ», 13 հունվարի 1916:

¹¹ ԳԱԹ, Տ. Հովհաննիսյանի ֆոնդ, № 263:

¹² «Մշակ», 13 հունվարի 1916: Վահան Տերյան. Երկերի ժողովածու. հ. 4, Երևան, 1979, էջ 243:

¹³ В. М. Ханзадян. Валерий Брюсов в Баку.—Брюсовские чтения 1962 года. Ереван, 1963, с. 331.

¹⁴ Иоанна Брюсова. Из воспоминаний.—Литературная Армения, 1959, № 5, с. 103.

¹⁵ Ա. Տերտերյան. Վալերի Բրյուսովը և հայ կուլտուրան. Երևան, 1944, էջ 42—43:

Հաջորդելով Ռաֆայել Պատկանյանին և Սմբատ Շահազիզին, Հովհաննիսյանը արևելահայ պոեզիային բերեց ժանրային բազմազանություն, լեզվական-տաղաչափական կուլտուրա: Ինչպես արձանագրված է «Հայաստանի պոեզիայի» առաջաբանում, նա «...ասես խնդիր էր դրել իր առջև ցույց տալ քնարերգության բոլոր ուղիները և տալ նրա բոլոր նմուշները: Երգ, ներբող, էլեգիա, պատմական առասպելների մշակում, փիլիսոփայական խոհ...»¹⁶: Պետք է ավելացնել նաև սոնետ, բալլադ: Այս ամենը Հովհաննիսյանը իրագործեց, դիմելով ժողովրդական երգին, բանահյուսությանը: Բայց հայ բանաստեղծի ժառանգությունը տարբերվում է նաև այդ նույն օրինաչափությամբ բնութագրվող նրա հաջորդների՝ Թումանյանի և Իսահակյանի ստեղծագործություններից: Հովհաննիսյանի ստեղծագործությունը իր ներքին տարբերով, ներքին պարտադիր հատկանշվում է անտիկ յուրատեսակ մի այնպիսի դսպվածությամբ, ինչը ուսական գրականագիտությունը բազմիցս համարել է Բրյուսովի պոեզիայի հիմնական առանձնահատկությունը: Դա որոշակիորեն կարելի է տեսնել մասնավորապես Հովհաննիսյանի պատմական քերթվածներում՝ «Արտավազը», «Վահագնի ծնունդը», «Սյունյաց իշխանը», և ուշագրավ է, որ Բրյուսովը գնահատում էր նրա հենց այդ գործերը. «...ես հոգով միշտ Ձեզ հետ էի, շատ ու շատ անգամ կարդալով, խորամուխ եմ եղել Ձեր պոեմների մեջ»¹⁷, — գրում է նա Հովհաննիսյանին 1916 ապրիլի թվակիր նամակում, նկատի ունենալով թվարկված գործերը, մասնավորապես «Արտավազը», որը նա նույնօրինակ զուսպ երանգներով թարգմանել է «Հայաստանի պոեզիայի» համար:

Տասական թվականներին հայ գրականագիտությունը որոշում էր XIX դարի գրողների, բանաստեղծների, հրապարակախոսների տեղն ու դերը գրականության պատմության մեջ: Վ. Բրյուսովի գնահատականները, որոնք մեծապես համընկնում են հունավորվող գրականագիտության կարծիքներին, գալիս էին ամրապնդելու այդ մոտեցումներն ու գնահատականները: Այս առումով անպայման հետաքրքրություն են ներկայացնում ուս բանաստեղծի նամակները Հովհաննիսյանին, որոնց մեջ բարձր է գնահատվում նաև հոգեհարազատ բանաստեղծի մարդկային նկարագիրը. «...էլ ավելի քիչ երջանկություն է վիճակվում հանդիպելու իսկական պոետի, ինչպես վիճակվեց ինձ հանդիպելու Ձեզ: ...ինձ երջանկություն վիճակվեց տեսնելու Ձեր լավագույն կերպարը, բայց չէ՞ որ դա հենց Դուք եք, իսկականը, և որպես այդպիսին էլ... հիշում եմ, պիտի հիշեմ և միշտ էլ պիտի ճանաչեմ»¹⁸:

Դարձում եղած օրերի մեծ մասը, սակայն, Բրյուսովը նվիրում էր Բաքվին. շրջում էր քաղաքում, լինում էր հիշարժան վայրերում, նավթաշխարհում, հանդիպումներ ունենում բազմազգ բանվորների ու ծառայողների հետ, և այդ ամբողջ ժամանակ նրան ուղեկցում է հայ մտավորականներից կազմված հանձնախումբը՝ Հովհաննիսյանի գլխավորությամբ: Այսպես, հունվարի 9-ին անվանի բանաստեղծը հայ մտավորականների հետ միասին այցելում է հայկական դպրոց: Շուրջ 400 մանկավարժներ ու աշակերտներ չերմորեն դիմավորում են Բրյուսովին: Դպրոցական խումբը երգում է ժողովրդական երգեր, աշակերտները ուսերեն արտասանում են նրա հայտնի «Քարտաշ» և «Հայաստանին» բանաստեղծությունները: Իր խոսքում Բրյուսովը կոչ է անում «սիրել մայրենի, հարազատ գրականությունը և նրա հետ ուս գրականությունը: Այլ երկու գրականությունը, — շեշտում է նա, — եղբայրացած են... համամարդկային ընդհանուր զգացմունքներով»¹⁹:

Իսկ հունվարի 10-ին Վ. Բրյուսովը լինում է Բալախանիի և Սուրախանիի նավթահանքերում (նախորդ օրը եղել էր Բիբի-Շեյքաթում և Սև քաղաքում): Մեծ հետաքրքրությամբ ծանոթանալով նավթագործների աշխատանքին՝ նա առանձնակի ուշադրությամբ է վերաբերվում «կրակապաշտների տաճարին» և նավթային շատրվաններին: Հենց այդտեղ էլ բանվորների Ապշերոնյան ընկերության անունից մի հայ բանվոր ողջունում է բանաստեղծին, շնորհակալություն հայտնում դասախոսության համար: Կրկին հանդես գալով պատասխան խոսքով, Բրյուսովը ասում է. «Ավելի մեծ երջանկություն չկա բանաստեղծի համար, քան այն գիտակցությունը, որ նրա երկերը տարածվում են ժողովրդական լայն խավերում...», և ապա՝ «ես պետք է

¹⁶ Поэзия Арменни. Ереван, 1973, с. 81.

¹⁷ Հովհ. Հովհաննիսյանի տուն-թանգարան, Հովհ. Հովհաննիսյանի ֆոնդ, № 127: Հմմտ. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1964, № 9, էջ 54:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ «Արև», 10 հունվարի 1916:

շնորհակալություն հայտնեմ... այն մեծ բավականության համար, որ պատճառով է ինձ հայկական պոեզիան»²⁰։

Ամենուրեք հայ հասարակայնությունը, քաղաքի բազմազգ բնակչության ամենատարբեր խավերը մեծարում են Բրյուսովին, նրա այցելությունը Անդրկովկասի արդյունաբերական ամենախոշոր կենտրոնում լինել է ածվում ժողովուրդների ելքայության սրտաբուխ տոնակատարության, գրական իսկական տոնի, որին իրենց մասնակցությունն է բերում ոչ միայն հայ, այլև ռուս և ադրբեջանական մտավորականությունը։

Նույն օրը՝ հունվարի 11-ին «Հայ գրասերների ընկերությունը» հրավիրում է արտակարգ նիստ։ Որոշվում է Բրյուսովին Թիֆլիս ճանապարհել ընկերության ամբողջ կազմով, «Վալերի Բրյուսովին՝ Հայ գրասերների ընկերությանը» մակագրությամբ նվիրել ոսկե գրիչ, վարչության նախագահ՝ Տ. Հովհաննիսյանին կարգել պատգամալուր՝ Բրյուսովին Թիֆլիս ուղեկցելու համար²¹։

Հունվարի 11-ի գիշերը Վ. Բրյուսովը Բաքվից մեկնում է Թիֆլիս. բացի գրասերների ընկերության անդամներից, ճանապարհահեղու էին եկել բանվորների ներկայացուցիչներ, մտավորականներ²²։

* * *

Հունվարի 12-ի երեկոյան ռուս բանաստեղծը ժամանում է Թիֆլիս, որտեղ նրան սպասվում էր նույնպիսի սրտագին ընդունելություն։ Մտաբերելով այդ օրերը, Ն. Թումանյանը գրում է. «Բրյուսովի գալու օրը մի խումբ գրական-հասարակական գործիչներ հայրիկի առաջնորդությամբ գնացին կայարան։ Բրյուսովը կնոջ՝ Իռանա Մատվեննայի հետ էր. դիմավորեցինք, ծանոթացանք։ Կառք նստեցինք։ Եկանք «Гранд отель» հյուրանոցը... Հայրիկը նախօրոք վերցրել էր երկու սենյականոց լավագույն համարը այդ առաջնակարգ հյուրանոցում... հայրիկը նրանց... ընթերցի հրավիրեց մեր տուն»²³։

Թումանյանի բնակարանում հավաքվել էին հայ և վրաց գրական-հասարակական գործիչներ. սկսվում է զրույց գրական հարցերից, Բրյուսովի՝ Անդրկովկասից ասացած տպավորություններից։ Թումանյանը նրան ցույց է տալիս Սայաթ-Նովայի ձեռագիրը, որն անցնում է ձեռքից ձեռք, Բրյուսովը կարդում է հատվածներ «Անուշից»՝ Վ. Իվանովի թարգմանությամբ²⁴։

Հաջորդ օրը Արտիստական ընկերության դահլիճում Բրյուսովը հանդես է գալիս բանախոսությամբ։ Դասախոսության վերաբերյալ լրագրային հայտարարություններից բացի փակցված էին աֆիշներ, իսկ տոմսերը վաճառվում էին այդ տարիներին Թիֆլիսում հայտնի «Մի բաժակ թեյում»։ Մամուլի տեղեկություններով և ժամանակակիցների վկայությամբ բոլոր տոմսերը վաճառվել էին առաջին իսկ օրը, և շատ-շատերը հնարավորություն չէին ունեցել ներկա գտնվելու։ Բանախոսության օրը «Հորիզոն» տպագրում է Թումանյանի «Ողջունում ենք» վերնագրով հոգվածը, որտեղ հանգամանորեն գնահատվում է ռուս բանաստեղծների, ի մասնավոր Բրյուսովի ձեռնարկած մեծ ու շնորհակալ գործը։

Երեկոն ներածական խոսքով բացում է Հովհ. Թումանյանը։ Նրա հեղինակավոր հավաստումով՝ հայ ժողովրդի ազգային ծանր աղետի օրերին, երբ ժողովուրդը իրեն զգում է «ֆիզիկապես անզոր ու տկար», հյուսիսից եկել է ռուս ճանաչված բանաստեղծ Վ. Բրյուսովը՝ խոսելու հայոց բանաստեղծության մասին, որը նա համարում է «հայ ազգի ազնվականության վկայական»։ «Ողջունում եմ Ձեզ, որպես ռուսական գրականության խոշոր ներկայացուցիչ, — ասում է նա, — և սիրով ու պատկառանքով խոնարհվում եմ ռուսական մեծ ազգի հույակապ գրականության առջև — Պուշկինի, Լերմոնտովի, Գոգոլի, Դոստոևսկու, Տուրգենևի, Չեխովի, Տոլստոյի և իրենց արժանավոր ժառանգների գրականության առջև, որի վրա կրթվել են մեր գրողներից ու մտավորականներից շատ շատերը։ Մենք ինքներս մեր կողմից վաղուց ենք կապված ձեր գրականության հետ, այժմ էլ ավելի ուրախ ենք փոխադարձ կապի համար, որ հաս-

²⁰ Նույն տեղում, 12 հունվարի 1916։

²¹ Նույն տեղում, 13 հունվարի 1916։

²² Նույն տեղում։ Հունվարի 11-ին Տ. Հովհաննիսյանը հեռադրում է Հովհ. Թումանյանին և խնդրում դիմավորել Վ. Բրյուսովին (ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, № 785)։

²³ Նվարդ Թումանյան. Հուլիս և զրույցներ. Երևան, 1969, էջ 140—141։

²⁴ «Հորիզոն», 14 հունվարի 1916։ Кавказское слово, 14 января 1916; Армянский вестник, 1916, № I, с. 22.

տատում՝ եր դուք, և աստված տա՝ դուք միակը չլինեք, որ ուս բարձր մտավորականության կողմից դալիս եք մեզ մոտ սիրո ու հարգանքի խոսքերով»²⁵։

Այնուհետև «գիտնականի լրջությամբ ու բանաստեղծի խանդավառությամբ» Բրյուսովը կարդում է իր դասախոսությունը, որից հետո ի պատիվ դասախոսի «Հայ գրողների կովկասյան ընկերությունը» տալիս է հանդիսավոր բազմամարդ ճաշկերույթ։ Բացելով այն, ինչպես հաղորդում է բուլշևիկյան «Պայքարը», ի դեմս ուս բանաստեղծի Թումանյանը կրկին ողջունում է մեծ ազգի գրականության այն ներկայացուցիչներին, որոնք «հայկական այս սարսափներով օրերում, իրանց խորին ուշադրությունն են դարձրել նրա կուլտուրայի ուսումնասիրության վրա և այն ներկայացնում ուս մեծ ժողովրդին»²⁶։ Այդ խոսքին Բրյուսովը արձագանքում է ժմի զգայուն պատասխան-ճառով, իր և իր գրչակիցների անունից խորին շնորհակալություն հայտնում այն վերարևմտիկ համար, որին արժանացել է իրենց կատարած գործը։ Այս Բրյուսովի պատվին կենացներ են առաջարկում վրաց մտավորականության կողմից Գր. Ռոբակիձեն, Ի. Նակաշիձեն, հայ մտավորականության անունից՝ Մ. Բերբերյանը, Պ. Մակինցյանը, Շիրվանդադեն, Հովհ. Աբելյանը։ Դ. Դեմիրճյանը և Կ. Քալաշյանը կարդում են իրենց թարգմանությունները Բրյուսովից, Ա. Կանչելին՝ Ռուսթավելու «Վազրենավորի» նախերգանքը (Բալմոնտի թարգմանությամբ)²⁷։ Ճաշկերույթի ճաշացուցակը հայկական ոճով ձևավորել էր Փ. Թերլեմենկյանը։ Նկարիչը վկայում է, որ ընթերցի միջոցին իրեն է մոտեցել Թումանյանը և հայտնել, թե Բրյուսովին անշափ դուր է եկել ճաշացուցակի ձևավորումը և ցանկանում է իր հետ ծանոթանալ²⁸։

Ի՞նչ Բաբվում և թե՛ Թիֆլիսում կայացած Բրյուսովի դասախոսությունները, բացառիկ ընդունելության արժանանալով, լայն արձագանք են գտնում անդրկովկասյան հայ, ուս և վրացական մամուլի էջերում։ Տպագրվել են ձեռնարկված պատվավոր գործը սրժեքավորող տասնյակ հոդվածներ ու հաղորդումներ, որոնց մեջ վեր են հանվել դասախոսի ընդհանուր հարցադրումները տարբեր բանաստեղծների և հատկապես հայ միջնադարյան բանաստեղծության բնութագրումների մասին։ Դրանց մեջ հանդիպում ենք նաև որոշ վերապահությունների, որոնք հիշեցնում են Ստ. Շահումյանի դիտողությունները Մ. Գորկու խմբագրած «Հայ գրականության ժողովածուի» աթիվը։ Ինչպես հայտնի է, այդ հոդվածում Շահումյանը մի կողմից մերժում էր ժամանակի հայ ճարտարակախոսության մեջ նկատվող «լավան-տիրացուական» ոգին ու ոճը, մյուս կողմից՝ մտավորականության մի որոշ մասի «ազգային պարծենկոտությունը»²⁹։ Դուրսկայանը իր «Ռուս-հայ գրական կապերը նախառևույցի շրջանում» գրքում հանգամանորեն անդրադարձել է հայ հասարակական մտքի նման արձագանքներին՝ տարբեր հոսանքների պատկանող մամուլի էջերում՝ առավելապես «Մշակում», «Հորիզոնում» և «Պայքարում»։ Հիմնականում ձիշտ ելակետերից այդտեղ քննվում են նաև Բրյուսովի դասախոսության մեջ հայաց պոեզիայի, հայ ժողովրդի պատմության վերաբերյալ առաջ քաշված տեսակետները։ Դրականագետը իրավացիորեն նշում է, որ դասախոսությունը «հակիրճ, բայց անաշու և կուեկտ քննադատություն ենթարկեց միայն «Պայքար» թերթը»³⁰։

Վ. Բրյուսովի դասախոսությունները իսկական իրադարձություն էին հայ գրական կյանքում և որպես այդպիսին էլ հայ հասարակական ամենալայն խավերում ընդունվում են մեծ խանդավառությամբ։ Այսպես, հուլիսի 1916-ի «Հայ գրողները Վալերի Բրյուսովի մասին» գրքում (Երևան, 1975, էջ 136) «Հորիզոնի» ամսաթիվը սխալմամբ նշված է 19-ը։

26 «Պայքար», 17 հունվարի 1916։

27 Кавказское слово, 15 января 1916; «Մշակ», 15 հունվարի 1916; «Պայքար», 17 հունվարի 1916; «Արև», 17 հունվարի 1916։

28 Թումանյանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1969, էջ 567—568։

29 «Պայքար», 14 օգոստոսի 1916։

30 Զ. Ղուկասյան. Ռուս-հայ գրական կապերը նախառևույցի շրջանում. Երևան, 1951, էջ 218։

բոլորի գրույցի առարկան մեր պոեզիան էր³¹։ Բարձրի «Արևի» թղթակիցը Թիֆլիսից հաղորդում էր. «Լսարանը հարբած էր գմայլանքի հույզերով, և ահա մի շաբաթ է՝ Բրյուսովի անունն է հոլովվում ամենուրեք, միջնադարի տաղերգուների ոտանավորներն են մրմնջում դպրոցներում, խմբագրատներում և նույնիսկ զբոսավայրերում ու առանձնասենյակներում»³²։

Ակնհայտ է, այն սովորական դասախոսություն չէր, այլ հոգեկոր-մշակութային մեծ իրադարձություն և, իհարկե, տեղին էր «Кавказское слово»-ի այս ուշագրավ ընդհանրացումը. «Ռուս բանաստեղծների ձգտումը դեպի վրաց և հայոց բանաստեղծությունն ինքնին բանաստեղծություն է։ Հենց այդ պատճառով Բրյուսովի ղեկուցումը մի փառավոր պոեմ էր՝ հավասարապես արժեքավոր թե՛ տեղական և թե՛ ռուսական կուլտուրական կյանքի համար»³³։ Նույն թերթը հունվարի 15-ին հայտնում էր, որ խմբագրությունը Թիֆլիսի հասարակայնությունից ստացել է բազմաթիվ նամակներ, որով խնդրում են որպեսզի Բրյուսովը կրկին բանախոսությունը, քանի որ ոչ բոլորն են հնարավորություն ունեցել ունենդրելու նրան։ Սակայն ռուս բանաստեղծն այդ հնարավորությունը չունեցավ, հունվարի 14-ին արդեն մեկնել էր Երևան³⁴։

* * *

Վ. Բրյուսովի Երևան մեկնելու հանգամանքների վերաբերյալ Ի. Մ. Բրյուսովան դրում է. «Մեր Թիֆլիսում գտնվելու վերջում այնտեղ եկավ Պ. Ն. Մակինցյանը, որպեսզի համոզի Վալերի Յակովլևիչին զնալ Երևան և այնտեղ կարգալ գոնե մեկ դասախոսություն, իսկ այնտեղից էլ գնալ էջմիածին»։

Վալերի Յակովլևիչը համաձայնվեց՝ ցանկանալով անձամբ լինել Հայաստանում, որի մասին նա այնքան շատ լսել, կարդացել ու խորհել էր հայ բանաստեղծների ստեղծագործությունների վրա աշխատելիս³⁵։ Վ. Բրյուսովին Երևան են ուղեկցում հայ գրողներից մի քանիսը, իսկ Երևանում դիմավորում է Վ. Տերյանը։

Նախքան Երևանում դասախոսելը, հունվարի 17-ին Բրյուսովները Վ. Տերյանի, Գ. Հովսեփյանի և Պ. Մակինցյանի հետ միասին ուղևորվում են էջմիածին։ Ի. Մ. Բրյուսովայի մտաբերումով, Երևանից էջմիածին ամբողջ ճանապարհին նշանավոր հայագետ Գ. Հովսեփյանը պատմել է Արարատի և Արագածի հետ կապված ավանդություններ ու զրույցներ։ Հասնելով էջմիածին, Պ. Մակինցյանը հյուրերին ուղիղ առաջնորդում է ճեմարանի ուսուցչական դահլիճը, որտեղ հավաքված ուսուցիչների, վանականների համար Բրյուսովը կարդում է իր դասախոսությունը։

Հրապարակված մի փաստաթղթից՝ Երևանի ժանդարմերիայի պետին ուղարկած էջմիածնի ժանդարմերիայի պետի գաղտնի ղեկուցագրից, երևում է, որ, ըստ երևույթին, Բրյուսովին էջմիածնում հետևել են։ «Այսօր (հունվարի 17-ին—Ան. Զ.)... ասված է ղեկուցադրում,— երեւելից էջմիածնի վանք է ժամանել բանաստեղծ և հրապարակախոս Վալերի Բրյուսովը, որտեղ նրան, վանքի գրադարանի շենքում, ճեմարանի դասախոսական անձնակազմը և վանքի միաբաններից մի քանիսը ճաշով պատվում են։ Այսօր եթե նա մտադիր է վերադառնալ Երևան, որտեղ, հայ հասարակայնության հրավերով, ենթադրում է կարգալ դասախոսություն»³⁶։

Հունվարի 18-ին Երևանի քաղաքային ակումբի դահլիճում Վ. Բրյուսովը կարդում է դասախոսություն, և ընդունելությունը նորից լինում է բուռն ու արտագին։ Պահպանվել են այդ դասախոսությունների հետ կապված Տերյանի երևանյան ժանդարմերից Մարգարիտ Շահխաթունու հետաքրքիր հուշերը, հետաքրքիր մանավանդ այն պատճառով, որ դա նաև Տերյանի առաջին այցելությունն էր Երևան, և հուշագիրը մանրամասնություններ է հաղորդում թե՛ Բրյուսովից և թե՛ Տերյանից։ Իր բնավորության համաձայն, այդ երեկոներին Տերյանը առանձնապես

31 «Գրական թերթ», 22 դեկտեմբերի 1963։

32 «Արև», 21 հունվարի 1916։

33 Кавказское слово, 15 января 1916. Հմմտ. «Արև», 17 հունվարի 1916։

34 «Մշակ», 15 հունվարի 1916։ «Արևի» հունվարի 17-ի համարում գրված է, թե Վ. Բրյուսովը Երևան է մեկնել հունվարի 15-ին։

35 Иоанна Брюсова. Указ. соч., с. 104.

36 Փաստաթուղթը հայտնաբերել և հրապարակել է Է. Ս. Դանիելյանը (Брюсовские чтения 1963 года. Ереван, 1964, с. 565)։

աչքի չի ընկել «որպես կաղմակերպիչ», դրա փոխարեն փայլելով բնածին համեստությամբ, «Պ. Մակինցյանը,— գրում է Շահաթունին,— ծափահարությամբ բեմ դուրս բերեց Բրյուսովին և մի քանի խոսքով ներկայացրեց նրան Երևանի հասարակությանը: Տերյանը նստած էր բեմի խորքում մի քանի գրականագետների հետ... Գուցե Տերյանին հանդիսականները իսկի չնկատեին էլ, եթե դասախոսության երկրորդ բաժնում, երբ Բրյուսովը սկսեց խոսել նրա մասին, ինքը հո չդառնար և ծափահարելով չներկայացներ նրան հասարակությանը: Դաշիճի բուռն ծափահարությանը Տերյանը պատասխանեց խորը զուլի տալով և նորից նստեց տեղը... Ընդմիջումի ժամանակ... մոտեցնելով ինձ Բրյուսովին, Տերյանը ասաց. «Валерии Яковлевич, познакомьтесь, вот наярника»: Բրյուսովը նայեց ինձ խորաթափանց հայացքով: Նրան ոչինչ չէր մնում անել, քան, սիրալիր լինելու համար, ասել ինձ իրեն վայել մի նուրբ կոմպլիմենտ: Լսելով նրան, Տերյանը ասաց. «Ընդհանրապես իմ հայրենիքը լի է գեղեցկություններով: Դուք իմ հայրենիքը սիրեցիք դեռ հեռվից. ինչպե՞ս կուզեի, որ այն Ձեզ չհիասթափեցնի, երբ դուք այժմ այստեղ եք»: Բրյուսովը հավատացրեց, որ ընդհակառակը՝ ինքը չափազանց զգացված է այն սիրալիր ընդունելությամբ, որ ցույց է տվել իրեն Երևանի հասարակությունը»³⁷:

Կաղմակերպական գործի փոխարեն, որ հիմնականում ստանձնել էր Պ. Մակինցյանը, Վ. Տերյանը համեստության հետ միասին փայլում է Վ. Բրյուսովին նվիրած, մարդկային ջերմությամբ ներծծված այն բանաստեղծությամբ, որի հուզաթափով շերտերից հյուսված բովանդակությունը ամբողջության մեջ վերածում է հայրենասիրական խոստովանության:

Բրյուսովի խիստ, մտազուսպ ու հանգիստ լեզվի հանդեպ սպասանեկան սիրուն միահյուսվում է իր պատմական գոյության ճանապարհին մրրկներ թաղած, շարժարված հայրենիքի հանդեպ բանաստեղծի սերը, պայմանավորելով բանաստեղծության անանցանելի հնչողությունն ու հրամայել: Կարելի է համոզված ասել, որ այն Բրյուսովին նվիրված բանաստեղծություններից լավագույնն է:

Երևանում գտնված օրերին երևանցիները ջերմ ընդունելություն են ցույց տալիս նշանավոր բանաստեղծին, միաժամանակ նրան ունկնդրելուց և նրա հետ շփվելուց ստանում մեծ բավականություն: Ամիսներ անց Լ. Մ. Բրյուսովային հասցեագրած նամակում Վ. Տերյանը հայտնում է. «Իմ երևանցի ծանոթները գրում են, որ Երևանը մինչև հիմա ապրում է այդ հաճելի հիշողություններ»³⁸: Բաղմաշարժար հայությանը Բրյուսովը բերում էր հոգևոր ինքնաճանաչողություն ու մատահոսություն, հույս և, իհարկե, հեշտ չէր ձերբազատվել նրա ելույթների տպավորությունից:

* * *

Երևանից Բրյուսովը վերադառնում է Թիֆլիս, սեպտի հասարակայնության խնդրանքով հունվարի 22-ին Արտիստական ընկերության դաշլիճում կարդում դասախոսություն «Հայաստանի սլաոմական շրջանները և հայ բանաստեղծության զարգացումը» թեմայով³⁹: Դա շատ ղծվարին հանձնառում էր: Զարգացնելով այն տեսակետը, թե հայ գրականությունը Արևմուտքի և Արևելքի սկզբունքների սինթեզ է, այս անգամ արդեն Բրյուսովը փորձում էր բնութագրել այն պատմական դարաշրջանների հաջորդականությամբ: Սա պահանջում էր և ականավոր հայագետներից պահանջեց տասնյակ տարիների քննախուզական ճիգեր, և, ինչպես պետք էր սպասել, դասախոսությունը հաջողություն չունեցավ:

Մամուլի տվյալներից հանգամանալից է «Արևի» թղթակցի հաղորդումը, որից ավելորդ չէր լինի քաղել որոշ հատվածներ. «Վ. Բրյուսովի առաջին դասախոսությունը, անպայման, ավելի հաջող էր, քան երկրորդը: Մեր կարծիքով «Հայաստանի պատմական շրջանները» բնութագրելու համար անհրաժեշտ շատ երևույթներ չհիշվեցին ու հատուկ ուշադրության արժանացան այնպիսի հանգամանքներ, որոնք շատ երկրորդական նշանակություն ունին: Զխոսվեց Ուրարտական բարձր կուլտուրայի մասին: Արևմուտքի և Արևելքի սկզբունքների համադրվելն ընդգծվեց, բայց նրանց անողոր պայքարը, որ բորբոքվեց Դ և Ե դարերում և մեծ հետքեր թողեց հայության ապագա զարգացման վրա համարյա չհիշվեց: Զհիշատակվեցին և է—Ժ դարերի մտավոր գործերը, ճար-

37 Վահան Տերյանը ժամանակակիցների հուշերում. Երևան, 1964, էջ 377—378:

38 Վահան Տերյան. Երկերի ժողովածու. հ. 4, էջ 255:

39 Մշակ, 22 հունվարի 1916: «Արև», 22 հունվարի 1916: Кавказское слово, 24 января 1916.

տարապետական կոթողները, երևան չեկավ Անին, որ ինքնին կուլտուրական սկզբունքների մի զեղանի սինթեզ է»⁴⁰:

Հիշատակված այս դասախոսությամբ էլ ավարտվում է Բրյուսովի շրջագայությունն Ան-դրկովկասում՝ արձագանքների արժանանալով ոչ միայն Բաքվի, Քիֆլիսի ու Երևանի, այլև այլ վայրերի հայության լայն շրջաններում: Հիշարժան է, որ 1916 թ. այդ օրերին դասախոսելու հրավերներ են լինում Բաթումից, Արմավիրից, Նոր Նախիջևանից և այլ տեղերից⁴¹, որոնց բուրնին, անշուշտ, ուսու բանաստեղծը չէր կարող ընդառաջել:

Երևանում Բրյուսովին ունենդրած գրականագետ Ա. Տերտերյանը հետագայում նրա դասախոսությունները համարել է «էպոխալեն»⁴²: Եվ իրոք. հայ ժողովրդի պատմության բախտորոշ պահին իր դասախոսություններով Բրյուսովը ուժ ու կորով էր ներշնչում հուսալքված հայությանը: Հայոց բանաստեղծությունը համարելով ազգի «ազնվականության վկայական», իսկ հայ ժողովրդին էլ՝ «բանաստեղծ ժողովուրդ», Բրյուսովը շեշտում էր հայոց պոեզիայի համաշխարհային արժեքն ու հնչեղությունը, մի հանգամանք, որ գրականից բացի, իր ժամանակի համառ հայտնի չափով ունեւ նաև բաղադրական կարևորություն: Այս առումով միանգամայն իրավացի են Ա. և Գ. Դերբենյանները, երբ գրում են. «Բրյուսովի 1916 թ. հունվարի ուղևորությունը Ան-դրկովկաս՝ որքան էլ կապված նրա նախորդ ամբողջ գործունեության հետ, սկզբունքորեն նոր երևույթ է: Եթե մինչ այդ Բրյուսովը հայոց բանաստեղծությունը պրոպագանդում էր ուսու բանաստեղծների և ընթերցողների շրջանում, ապա այժմ նրա խոսքերն ուղղված էին հայերին: Այդ ուղևորության նպատակը հայոց բանաստեղծության արժանիքների մասին հաղորդում տալը չէր (որը նույնպես ավելորդ չերևա), այլ հայ ժողովրդի հոգևոր պաշտպանությունն էր՝ պատմական ծանր փորձություն օրերին: Նման խնդիրներ նրանից առաջ իր առջև դեռևս չէր դրել ուսու գրողներից ոչ ոք»⁴³:

Ավարտելով մի ամբողջ ժողովրդի հոգևոր պաշտպանության նվիրական առաքելությունը, վ. Բրյուսովը 1916 թ. հունվարի 24-ին Քիֆլիսից վերադառնում է Մոսկվա⁴⁴:

* * *

Բրյուսովի անդրկովկասյան ուղևորությունը սերկայացնելիս անհրաժեշտաբար հարկ է դրացնում անցրադառնալու Հովհ. Թումանյանի հետ նրա հանդիպումներին, փոխադարձ վերաբերմունքին ու փոխհարաբերություններին: Պատճառներից մեկը նախ այն է, որ նամակներում, հուշերում հաճախ նշվում է, որ Բրյուսովը Քիֆլիսում ամենուրեք շրջապատված է եղել Թումանյանի հոգատարությամբ: Նվարդ Թումանյանի մտաբերումով, քաղաքում եղած օրերին նրանք հանդիպել են ամեն օր, շրջել, զրուցել⁴⁵: Առավել մանրամասն են Ի. Մ. Բրյուսովայի մտաբերումները: «Իմ բոլոր հուշերի մեջ Քիֆլիսյան հանդիպումներից ամենավաղը Հովհաննես Թումանյանին վերաբերող հուշերն են: Բոլոր դեմքերը մթազնել են անմոռաց բանաստեղծի անշնչելի կերպարի առջև»⁴⁶, — գրում է նա, թվարկելով հետաքրքիր նախաձեռնությունների, ուշադրության մի շարան. Թումանյանը Բրյուսովներին դիմավորում է, ճանապարհում, Թումանյանը Բրյուսովի դասախոսությունների, նրա պատվին ճոխ ընդունելությունների կազմակերպիչ է, նա է նախաձեռնում այց Սալաթ-Նովայի գերեզմանին, նա է նրանց ուղեկցում դեպի «Դավթր» լեռն ու Ս. Դավթի վանքը, որպեսզի ուսու բանաստեղծը խոնարհվի Գրիբոլդովի շիրմի առջև, Թումանյանը Բրյուսովներին տանում է Քիֆլիսի հուշակավոր բուսաբանական այգին, միասին շրջում քաղաքում և նրա շրջակայքում... Ի. Բրյուսովան նշում է, որ նրանք կարճ ժամանակում զարձեղ էին մերձավոր հարազատներ, որը հավաստվում է նրանց ազատ, անկաշկանդ զրույցներով: Իսկ զրույցների բուն նյութը, մշտական առանցքը, բնականաբար, եղել է հայոց բանաս-

40 «Արև», 30 հունվարի 1916:

41 «Հորիզոն», 22 հունվարի 1916: ԴԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, № 785ա, Տ. Հովհան-նիսյանի ֆոնդ, № 266: «Արև», 22 հունվարի 1916:

42 Ա. Տերտերյան. նշվ. աշխ., էջ 5:

43 А. Дербенева, Г. Дербенев. Брюсов как классик дружбы народов. — Брюсовский сборник, Ставрополь, 1974, с. 97

44 «Արև», 22 հունվարի 1916: «Հորիզոն», 26 հունվարի 1916:

45 Նվարդ Թումանյան. Հուշեր և զրույցներ, էջ 141:

46 Иоанна Брюсова. Указ. соч., с. 103.

տեղծությունը, որը և վերաիշխում է Դ. Դեմիրճյանը՝ Բրյուսովի ընդունելությանը, դասախոսության թեր ու դեմ մթնոլորտին վերաբերող ալիքալ մտաբերումների հետ միասին, Դեմիրճյանի հուշերից իմանում ենք, որ Թումանյանը երկյուղ է ունեցել, թե «Հայաստանի պոեզիայի» պես «նոր և ուշագրավ» ձեռնարկը «կարող էր հանդիպել հայ մտավորականության որոշ մասի խեղճ վերաբերմունքին», ուստի և մտավորականության շրջաններում, այդ օրերին «հանդիսավոր տեսք ստացած» իր տանը լայնորեն ներկայացնում էր Բրյուսովին և նրա դործը, ինչ վերաբերում է «Հայաստանի պոեզիայի» նկատմամբ եղած տեսակետներին, ապա Դեմիրճյանի հավաստումով՝ «Թումանյանի և Բրյուսովի տեսակետները բռնում էին շատ բաներում: Դա մեր «Վերնատան» տեսակետներն էին: Այն, որ մեր գրականության հարատև աստղերը կարող են լինել միայն այն գրողները, հնագույն կամ նորագույն, որոնք... տվել են համամարդկային գաղափարներ և պայքարել են գրական բարձր որակի համար: Հայ կլասիկների և դիդակտիկական արժեքների վերահանման խնդիրն էր ծածկում»⁴⁷, ինչպես «Հայաստանի պոեզիայի» առաջաբանում խոստովանել է Բրյուսովը, անդրկովկասյան ուղևորության նպատակներից մեկն էլ եղել է դա. «Իմ փորձիկ ճանապարհորդությամբ, այսպես թե այնպես, ավարտվեց Հայաստանին վերաբերող իմ աշխատանքների առաջին շրջանը, հնարավորություն տալով, որ կենդանի տպավորություններով հաստատեմ իմ կարծիքս այն նկատառումներն ու հեղինակավոր անձանց քննադատությամբ կամ հավանությամբ ստուգեմ այն եզրակացությունները, որոնց ես հանգել էի ինքնուրույն աշխատելիս...»⁴⁸:

«Հայաստանի պոեզիան» ամբողջացնելուց առաջ տեղում հայ բանաստեղծների հետ անմիջական շփումներով նա ճշտել է հայոց բազմադարյան բանաստեղծության գնահատության իր ընդհանուր ելակետեր, ինչպես և առանձին բանաստեղծների մասին իր տեսակետները: Այնպես որ միանգամայն իրավացի է Բրյուսովի գնահատողներից անվանի դրականագետ Ա. Տերտերյանը, երբ գրում է. «Հայտնի է, որ Բրյուսովը ո՛չ միայն լավ էր լսոսում, այլև լավ էր լսում... Լավ լսելու ընդունակություն ունենալով՝ Վ. Բրյուսովը սպունգի պես ծծել է այն ամենը, ինչ լսել էր մեր նշանավոր բանաստեղծներից հայ գրականության, հայ պատմության, հայ դիցաբանության խնդիրների վերաբերմամբ: Եվ այդ բոլոր լրածները, ո՛չ միայն Թումանյանի և Հովհաննիսյանի հաղորդումները, այլև շատ ուրիշ հայ գործիչների հետ ունեցած շփումները իդուր չեն անցել Բրյուսովի համար: Նրա քննադատական կարծիքների մեջ կան շատ տեղեր, որոնք ցույց են տալիս, որ ռուս բանաստեղծը աշխատել է հանրագումարի բերել հայ առաջավոր հասարակության մեջ իշխող որոշ տեսակետները»⁴⁹:

Կասկած չի կարող, որ Թումանյանի և Բրյուսովի զրույցներում միաժամանակ շոշափվել են գրականության առաքելության, բանաստեղծի կոչման և նման այլ հարցեր՝ անշուշտ, կապված հատկապես պատերազմական իրադրության հետ: Թե ինչը կամ ինչպիսին է եղել նրանց փոխանակած մտորումների ոգին, պարզորոշ հուշում է Թումանյանի բանաստեղծությունը՝ նըվիրված Բրյուսովին: Իր գեղարվեստական բնույթով այդ բանաստեղծությունը էպիկական շնչով հյուսված յուրատեսակ կոչ է՝ ուղղված «մարդկանց սրտերի» տիրակալներին՝ Բրյուսովի հետ միասին աշխարհի իր գրչեղբայրներին: Արժանապատվությամբ ներծծված մի կոչ, որ վերաճում է մարդկային սիրո ու եղբայրության, բարու, գեղեցիկի ու վեհ գործերի մրցակցության՝ հրավեր-հանդեսի.

...Աշխարհից աշխարհ թող ձեն տան իրար,
Որոնք իշխում են մարդկանց սրտերին,
Ազգերն ինչ ունեն ազնիվ ու պայծառ,
Թող ի մի բերեն էս դառն օրերին:
Եվ թող սրտերի դաշըն կապեն կուռ,
Ամուր շաղկապեն անսահման սիրով,
Շնչեն կենդանի մի շունչ ընդհանուր,
Կյանքը ջերմացնեն հոգեղեն հըրով:
Եվ թող մի պայքար լինի կյանքի մեջ՝

⁴⁷ Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 39:

⁴⁸ Поэзия Армении, с. 9.

⁴⁹ Ա. Տերտերյան. Նշվ. աշխ., էջ 34:

Թե ով ավելի ուժգին կըսիրի,
 Եվ թող մի մրցում լինի միշտ անվերջ՝
 Բարու, գեղեցկի ու վեհ՝ գործերի...⁵⁰

Առաջին տողից մինչև վերջինը բանաստեղծությունը ներթափանցված է համամարդկային սիրով ու հույսերով, որոնց մասին բնաշնչման խորին հասած հայ ժողովրդի բանաստեղծը խոսում է մարդկային սրտեր վարակող հոգեղեն անմիջականությամբ ու ջերմությամբ:

Նույնն է վկայում և Բրյուսովի «Զոնը» Թումանյանին (թվագրված է 1916 թ., փետրվարի 25, Մոսկվա), որը վերլուծվող բանաստեղծության ուղղակի պատասխանն է՝ դարձյալ ծնունդ առած նրանց դրույցներից, խոհերից ու մտորումներից: Առաջին տողերից Պուշկինի՝ աջսորջալ դեկարրիստներին հղած բանաստեղծության ռիթմերը հիշեցնող Բրյուսովի «Զոնը» մարմնավորում է հավատ, տոգորված է այն տրամադրությամբ, որ ի վերջո մութը կխոցվի և աստեղազարդ երկնքի տակ կտոնվի եղբայրության ու սիրո երազած հանդեսը:

Բախտի հատուցումը կգա՝ մի օր,
 Որ սպասել եք դարեր այսքան:
 Դու աստեղատուն հիմնեցիր նոր
 Երկնակամարում քո հայկական.
 Թող փոքրիկ և մեծ աստղերը պարզ
 Շրջապատեն քեզ՝ մութը խոցած.
 Իսկ մենք կնայենք ոլորտն անհաս՝
 Քո պայծառ լույսով սրանշացած⁵¹:

Իր երկերի շորս հատորի հետ միասին Մոսկվայից Թիֆլիս առաքած այս «Զոնը» թանկ էր ինչպես Թումանյանի, այնպես էլ նրա ժողովրդի համար, այդ ժողովրդին այն բերում էր ամենակարևորը՝ «բախտի հատուցման» հավատ:

Թումանյանը մոգական զրուցակից էր, նրա վիպականորեն հանդարտ խոսքը ուներ ազդեցության և համակումի ինքնաբերական լիցք, որ տարբեր առիթներով խոստովանել է նաև Բրյուսովը: «Հայերին» բանաստեղծության ինքնագրին կից, որը դրել է հունվարի 23-ին, կարդում ենք. «Հովհաննես Թումանյանին այս բանաստեղծությունը՝ ոգեշնչված նրա դրույցներից, նրախտապարտ հեղինակից»:⁵² Մի նամակում նա գրում է. «...իմ հիշողությունները մեր հանդիպման մասին մնում են և կմնան միշտ ինձ համար ամենաթանկագին հուշերի շարքում»⁵³:

Եվ իսկապես, Թումանյանի և Բրյուսովի բարեկամությունը շարունակվում է մինչև նրանց կյանքի վերջը՝ փոխանցվելով Բրյուսովի աշրուն և Թումանյանի ժառանգներին:

Հարկ է նշել, որ հայ պոեզիայի ուսումնասիրությամբ ու թարգմանությամբ զբաղվելու, ինչպես և անդրկովկասյան շրջագայությունների ժամանակ Վ. Բրյուսովը ոգեշնչված գրում է մի շարք բանաստեղծություններ՝ «Հայաստանին», «Հայերին», «Արարատին», «Արարատը նրբվանից», որոնք բոլորն էլ անխտիր տպագրված են հայ ժողովրդի, Հայաստանի նկատմամբ տաժա՛ծ ջերմ սիրով ու ապագայի մեծ հավատով:

* * *

Անդրկովկասից վերադառնալով Մոսկվա, մինչև «Հայաստանի պոեզիայի» հրատարակվելը, հայ բանաստեղծության մասին Բրյուսովը նորից դասախոսություններ է կարդում ռուս և հայ հասարակայնության առջև: Հունվարի 28-ին հանդես է գալիս Պոլիտեխնիկական թանգարանում, մարտի 25-ին Մոսկվայի համալսարանում՝ «Ռուսաստանի գրականությունը սիրողների ընկերության» հավաքում, մայիսի 14-ին՝ Տենիշկյան ուսումնարանում, որոնց վերաբերյալ հաղորդումներ են տպագրվում «Армянский вестник»-ում, հայկական թերթերում⁵³: Դասախո-

⁵⁰ «Գրական թերթ», 30 հունիսի 1940:

⁵¹ Վ ա լ ե Ր ի Բ Ր Յ Ո Ս Ո Վ. Հայաստանի և հայ կուլտուրայի մասին. Երևան, 1967, էջ 22: Ռուսերեն բնագիրը տե՛ս ԴԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, № 1289:

⁵² Վ ա լ ե Ր ի Բ Ր Յ Ո Ս Ո Վ. նշվ. աշխ., էջ 220:

⁵³ Армянский вестник, 1916, № 1, с. 23, № 10, с. 23, № 17, с. 24, «Արև», 3 փետրվարի 1916:

առիթմի ենթակային համալսարանում, ընդունվում են մեծ հետաքրքրությամբ, որի առիթով ապրիլի 13-ին Բրյուսովը տեղեկացնում էր Թումանյանին. «Վերջերս ես դասախոսություն կարդացի համալսարանում... «Միջնադարյան հայ պոեզիայի մասին» (Գրիգոր Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա) և կարողացա համոզվել, թե որքան են հետաքրքրվում ընթերցողները, որոնք առաջ չէին էլ մտածում հայկական պոեզիայի գոյության մասին: Եվ ես ստանում եմ բազմաթիվ նամակներ հայերից ու ռուսներից, որոնք վկայում են նույնը: Եթե կարելի լինի հասնել միայն այդ նպատակին, դա կլինի իմ աշխատանքի վարձատրությունը հարյուր և ավելի անգամով»⁵⁴:

Միաժամանակ Վ. Բրյուսովը եռանդով ու նվիրվածությամբ ամբողջացնում էր «Հայաստանի պոեզիան. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», որը լույս է տեսնում 1916 թ. «գոսպոսի սկզբին» Մոսկվայում: «Հայաստանի պոեզիայի» լույս աշխարհ դալը արժանացավ հայկական և ռուսական մամուլի մեծ ուշադրությանը: Հայ աչքի ընկնող համարյա բոլոր թերթերը և ամսագրերը հանդես եկան գրախոսություններով ու հաղորդումներով: Արձագանքաց նաև ռուսական մամուլը: Ժամանակի հեղինակավոր «Летопись» ամսագիրը գրում էր. «Հայ բանաստեղծների թարգմանությունների փառահեղ և ստվար հատորը ոչ միայն խոշոր երեւելով է հայ բանաստեղծության համար, այլև մեծ տոն ռուս բանաստեղծության համար»⁵⁵:

Ժողովածուի հրատարակությունից մինչև այսօր, տասնամյակներ շարունակ «Հայաստանի պոեզիան» շարունակում է մնալ գրական հասարակայնության, գրականագիտության ուշադրության կենտրոնում: Գրվել են մենագրություններ, բազմաթիվ հոդվածներ, շեշտվել և շեշտվում է ժողովածուի թե՛ գիտական, թե՛ հասարակական-քաղաքական նշանակությունը:

«Հայաստանի պոեզիան», իրոք, «էպոխալ զործ էր», այն նշանավորում էր ռուս և հայ մշակութային-գրական փոխադարձ կապերի ամրապնդման նոր, հիմնավոր շրջափուլ: Ժողովածուի վրա կատարած աշխատանքով Բրյուսովը զինվորագրվում է հայոց դատի պաշտպանությանը, հայ ժողովրդի մշակույթի զարգացման ու մասսայականացման գործին, որին ծառայում է հավատարմորեն մինչև կյանքի վերջը:

* * *

Մոսկվայից Վ. Բրյուսովը շարունակում է նամակագրական կապերը իր հայ բարեկամների, հատկապես Հովհաննես Հովհաննիսյանի, Հովհաննես Թումանյանի և Տիգրան Հովհաննիսյանի հետ: Հայ հասարակայնությունը նրա անձի ու դասախոսությունների տպավորության տակ էր և ցանկություն ուներ կրկին հանդիպելու նրան: Տ. Հովհաննիսյանին հասցեագրած 1916 հունիսի 7 թվականի նամակից պարզվում է, որ ռուս բանաստեղծին առաջարկվել է հայ պոեզիայի մասին դասախոսություն կարդալ Կովկասյան Հանքային ջրերում, նա մերժել է և սակայն հայտնել, թե «շատ ուրախ կլինեի նորից լինել Բաքվում», որից «պահում ենք լավագույն հուշեր»⁵⁶: Նոյեմբերի 20-ին Հովհ. Հովհաննիսյանին Բրյուսովը արդեն տեղեկացնում էր. «Հուսով եմ համեմատաբար շուտ տեսնվել Ձեզ հետ, քանի որ հունվարին հրավիրված եմ,— այդ մասին, հավանաբար, Դուք լսել եք,— կրկին մի քանի դասախոսություններ կարդալու Բաքվում»⁵⁷:

«Հայ գրասերների ընկերության» հրավերով Վ. Բրյուսովը երկրորդ անգամ Մոսկվայից Բաքու է գալիս 1917 թ. հունվարի 17-ին⁵⁸: Ընկերության նախաձեռնությամբ հունվարի 19-ին Թաղիկի թատրոնում բազմամարդ ու բազմազգ հասարակայնության առաջ ռուս բանաստեղծը հանդես է գալիս «էմիլ Վերհարն և հերոսական Բելգիան» վերնագրով դասախոսությամբ⁵⁹: Վերհարնի նամակը, մանավանդ նրա հայրենիքի ճակատագիրը պատերազմական ծանր օրերին, ցնցել էր Բրյուսովին, և իր խոսքը հենց դրանից էլ սկսում է նա: Բաքվի «Արև» լրագիրը մանրամասնորեն հաղորդել է դասախոսության բովանդակությունը, որը, անշուշտ, կարող է հետա-

54 ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, № 580:

55 Летопись, 1917, № 2—4, с. 428.

56 ԳԱԹ, Տ. Հովհաննիսյանի ֆոնդ, № 79:

57 Հովհ. Հովհաննիսյանի տուն-թանգարան, Հովհ. Հովհաննիսյանի ֆոնդ, № 127:

58 «Արև», 17 հունվարի 1917: Кавказское слово, 22 января 1917. Ի դեպ, իր ուշագրավ հետազոտության մեջ Տ. Անշուղովան սխալմամբ գրում է, թե Վ. Բրյուսովը Բաքու է եկել Հասարակության (Брюсовский сборник Ставрополь, 1977, с. 61):

59 «Արև», 13, 21 հունվարի 1917:

քրքրերի ռուս և հայ գրական շրջաններին: «Ողորդական մահով մեռավ էմիլ Վերհարնը՝ հեղինակական Բելգիայի մեծ զավակը իր հայրենիքի ամենեն դառնաշունչ օրերին,— սկսելով դասախոսությունը ասել է ռուս բանաստեղծը:— Նա մեր ժամանակի մեծագույն բանաստեղծն է, աստի տիտանը, խոսքի վարպետը, արդի մարդկության Դանտեն, որ միշտ նորանոր հորիզոններ ընդգրկելով, միշտ նորանոր ձևերով ու գրական բոլոր ուղղություններով արտահայտելով իր հանձարը՝ երգեց հարաճուն ու ձգտող տիեզերքը, մարդկությունը, բոլոր խնդիրներն ու հույզերը, եղավ մեծ հայրենասեր բանաստեղծ և միաժամանակ հանրամարդկային պոետ»⁶⁰։ Բրյուսովը շեշտում է մարդկության և հայրենիքի տառապանքները, աշխատավորության ցավերն ու պայքարը երգելու Վերհարնի մեծագույն արժանիքը։ «Մարդկության և հայրենիքի վիշտը ետևում էր նրա հոգում,— ավելացնում է նա,— և կերտում էր նա գրական հրաշալիքներ, մեծ մասամբ դուրսագնացներ» հարազատ ժողովրդի պատմության, աշխատավոր զանգվածների մաքառման դրվագներից, որոնց շարքը համաշխարհային պատերազմի արյունոտ օրերին եկել են լրացնելու փոքր ժողովուրդների՝ Բելգիայի, Սերբիայի, Արարատի «արյունոտող երկրի» գոյապայքարի դրվագները։ «Գլխավորապես փոքր, տառապող, բայց կորույի ժողովուրդների երգիչն է նա,— հաստատում է Բրյուսովը,— ժողովուրդների, որոնք ընկնում են հանուն լավագույն իդեալների, ժողովուրդների, որոնք կրում են մարդկության հույակալ ավանդները և որոնք իսկապես պիտի ստեղծեն բարձր ապագան։ ...Վերհարնը... արյան օրերին իսկ մի վայրկյան անգամ չդադարեց լուսավոր ապագան օրհներգելուց»⁶¹։

Վրոտալուտ հեղափոխության նախօրերին Բաբկի բազմապեղ բանվոր դասակարգին ազատագրական պայքարի կորով ներշնչելու հետ միասին, Վերհարնի ստեղծագործության վերհանումով Բրյուսովը նաև լավատեսության էր կոչում բազմաշարժար հայ ժողովրդին։ Այդ իսկ օրերին նա գրում է «էմիլ Վերհարնը Հայաստանի մասին» հոդվածը՝ «հատկապես» «Գործ» ամսագրի համար, որը Տ. Հովհաննիսյանի թարգմանությամբ տպագրվում է 1917 թ. Ռ 3-ում։ Հոդվածի նյութը, անշուշտ, հավաքվել էր որոշակի նպատակամղումով։ Դրանից երևում է, որ «փոքր» Բելգիայի մեծ զավակը տաղանավոր է հետևել հայ ժողովրդի գլխին եկող փորձություններին։ Այդ առումով հիշարժան են է. Վերհարնի «Աղաղակ» բանաստեղծությունից քաղված տողերը,

որտեղ խոսվում է այն մասին, թե ի թիվս այլ ժողովուրդների, ինչպիսի շարքերն է գործել պատերազմը պատմական Հայաստանում. «Եվ դանդաղորեն խցնում է այդ աղաղակ կարմրաներկ աշխարհն Հայաստան, ծվատում է այնտեղ էրգրում ու Մուշ, Սղերդ ու Բաղեշ և Վան...»։ Հունվարի 24-ին դարձյալ Թաղիկի թատրոնում տեղի է ունենում Բրյուսովի երկրորդ՝ «Ուսուցիչների ուսուցիչները (մարդկության հնագույն մշակույթների մասին)» դասախոսությունը⁶²։ Մամուլի հայտարարությունից տեղեկանում ենք, որ հասարակականության պահանջով այդ դասախոսությունը պետք է կրկնվեր Հասարակական ժողովարանի դահլիճում՝ փետրվարի 2-ին⁶³։ Մարդկության հնագույն անցյալի մշակույթին խորապես գիտակ Բրյուսովը, հայ պոեզիային, հայ ժողովրդի պատմությանը զուգընթաց զբաղվում էր Կովկասի պատմությամբ։ Այդ է վկայում Տ. Հովհաննիսյանին հասնող հարած նրա 1917 փետրվարի 23 թվակիր նամակը, որով հայտնում էր, թե «Գործին» համար ուղարկում է իր «Ուսուցիչների ուսուցիչները» բանախոսությունից՝ Կովկասին և հարևաններին վերաբերող մշակված մի հատված⁶⁴։ Վերոհիշյալ հատվածը, «Սֆինքսեր ու վիշապներ» վերնագրով, տպագրվել է «Գործին» 1917 թ. Ռ 5—6-ում։

Հունվարի 29-ին ՆՀԱյ գրասենյակի ընկերությունը՝ Հասարակական ժողովարանի դահլիճում կազմակերպում է հիշարժան մի այլ երեկո։ Այն նվիրված էր Ա. Ս. Պուշկինի մահվան 80-ամյակին⁶⁵։ «Լավագույն պուշկինագետ» Բրյուսովը, որ Պուշկինի ժառանգությամբ հիմնավորապես զբաղվել էր պատանեկան տարիներից, լեհ-լեցուն դահլիճում հանդես է գալիս Պուշկինի հասարակական հայացքներին վերաբերող դասախոսությամբ։ Դատելով «Արևի» ընդարձակ հաղորդումից, հարկ է նշել, որ Բրյուսովի բանախոսության ելակետերը ամբողջովին ընդունելի են մեր օրերում։ Ավելին. Պուշկինի ստեղծագործության համաշխարհային նշանա-

60 Նույն տեղում, 21 հունվարի 1917։

61 Նույն տեղում։

62 Նույն տեղում, 24 հունվարի 1917։

63 Նույն տեղում, 31 հունվարի 1917, 2 փետրվարի 1917։

64 ԳԱԹ, Տ. Հովհաննիսյանի ֆոնդ, № 81։

65 «Արև», 31 հունվարի 1917։

Վրացիները, նրա հասարակական աշխարհայացքի բնորոշ կողմերն ու ծախքերը Բրյուսովը, կարծես, վեր է հանում մեր ժամանակի պուշկինագիտության ելակետերից: Միաժամանակ Պուշկինի ազատասիրությունը մեծաբող նրա խոսքում, ասես, զղացվում է մոտալուտ հեղափոխության ինչ-որ անսրբող նախազգացում, թե՛ շունչ: «Պուշկինը Ռուսիայի հանճարն է, իր բազմազան հայրենիքի բազմախորհուրդ արտահայտիչն ընդհանուր գրականության մեջ. նա այն հոգն ու երկինքն է միաժամանակ, որոնց մեջ ծաղկում ու դալարում է ուս գրականությունը: Նա համայնապարփակ հանճար է և անմահ ուսուցիչ, կրթել, կրթում և դեռ պիտի շարունակի կրթել սերունդները: Պուշկինն այն հոյակապ գրականությունն է, որից սկիզբ են առնում իրենից հետո եղած գրական բոլոր ուղղությունները, նա այն արմատն է, որից ծլել են՝ Գոգոլ, Տոլստոյ, Դոստոևսկի, Ալ. Տոլստոյ, Տուրգենև և այլն և այլն»⁶⁶: Ապա «մանրակրկիտ» վերլուծությամբ պարզաբանում է, որ «Պուշկինը եղել է ազատամիտ, ազնիվ քաղաքացի, մեծ մարդասեր, խոնարհ խավր՝ գլուղացիությունը գուրգուրող և ուսական արխատկրատիան՝ «ամբոխը» պարսպապաշտ... Որքան կանցնի ժամանակը,— շեշտում է նա,— այնքան նա կմեծանա, նա Ռուսիան ինքն է և ամբողջ ուսաց գրականությունը»:

Ինչպես նախորդ, այնպես էլ այս այցելությամբ Վ. Բրյուսովը անուրանալի լիցք էր հաղորդում Անդրկովկասի, մասնավորապես հայ գրական կյանքին: Եթե հայ բանաստեղծությունը գնահատելով նա խթանում էր այն ճանաչելու և ուսումնասիրելու, նրա դարավոր ավանդները օգտագործելու կարևորության գիտակցումը, ապա Պուշկինին նվիրված դասախոսությամբ ներարկում էր ազատասիրական ոգի: Վերհարնի մասին բանախոսությամբ դրա հետ միասին գրասեր երիտասարդության առջև բացում էր համաշխարհային պոեզիայի արդիական շրջանի նոր հորիզոններ:

Այս անգամ ևս Բաքվում եղած օրերին Բրյուսովը լայնորեն շփվում է հայ գրողների, մտավորականների, հայ հասարակայնության տարբեր խավերի հետ: Հունվարի 25-ին, օրինակ, նա մասնակցում է Հասարակական ժողովարանի դահլիճում հայ ուսուցիչների կազմակերպած «Մի բաժակ թեյին»: Երկու քաղմությամբ լեցուն դահլիճում կատարվել են երգեր, պարեր, արտասանություններ: «Ինքնաբերաբար» բևեռ բարձրանալով, Հայաստանին, հայ ժողովրդին նվիրված իր բանաստեղծություններն է կարդում Վ. Բրյուսովը⁶⁷: Լինում են և այլ միջոցառումներ ու հանդիպումներ:

Ուշագրավ է, որ «Հայաստանի պոեզիան» լույս տեսնելուց հետո այդ օրերին նույնպես անվանի բանաստեղծի շարունակում էր զբաղվել հայոց բանաստեղծությամբ, որն իր հուշագրական նոթերում վկայում է Գեորգի Շենգելին: «Բրյուսովը նստած էր մենակ՝ իր մշտական սերթուկով և օսլայա՝ բարձր օձիքով, ձախ ձեռքով թերթում էր հայերեն լեզվով ինչ-որ հիւրք, իսկ աջով՝ դարձյալ հայերենով, գրանից քաղվածքներ էր անում,— վերհիշում է Գ. Շենգելին:— Նա ինչ ընդունեց բարյացակամ, հրավիրեց նստել և ոգևորված խոսում էր, թե ինչպիսի հիանալի բանաստեղծ է Սայաթ-Նովան»⁶⁸: Գ. Շենգելին հիշում է նաև, որ նույն երեկոյան՝ Վ. Բրյուսովի և Ի. Սևերյանի հաշտության առթիվ տրված ընթերթին վերջինս կարդացել է իր «պոեզիաները». Բրյուսովը իրենից ոչինչ չի կարդացել և «ընդհանուր ճնշման տակ կարդացել է Սայաթ-Նովանից մի քանի թարգմանություններ»⁶⁹:

Այս փաստական տվյալներին ավելացնենք նաև, որ սկզբնապես նախատեսված է եղել, որ Բրյուսովը Բաքվից պետք է մեկնեի Թիֆլիս՝ կրկնելու իր դասախոսությունները⁷⁰: Սակայն նախնական որոշումը փոխվել է: Հովհ. Թումանյանին հասցեագրած նախ հեռագրով⁷¹, ապա նամակով նա խնդրում է դասախոսությունները կամ ընդլայն համարել, կամ էլ հետաձգել: «Զգիտեմ՝ ինչպես Ձեզանից ներողություն խնդրել՝ Ձեզ պատճառած զխաջավանքի համար՝ խոստանալով գալ Թիֆլիս, բայց հետո ստիպված եղա հրաժարվել այդ պատվից ու բավական

⁶⁶ Նույն տեղում:

⁶⁷ Նույն տեղում, 28 հունվարի 1917:

⁶⁸ Георгий Шенгел. Валерий Брюсов.—Литературная Армения, 1980, № 9, с. 96.

⁶⁹ Նույն տեղում, էջ 96:

⁷⁰ «Մշակ», 25 հունվարի 1917: Кавказское слово, 25 января 1917. «Գաղափար», 27 հունվարի 1917:

⁷¹ ԳԱԹ, Հովհ. Թումանյանի ֆոնդ, № 578:

նույնից, քանի որ, հիշտն ասած, ես մեծ պատիվ եմ համարում դասախոսություն կարդալ Ձեր նախազահությունը, և ինձ համար վիթխարի հաճույք կլիներ կրկին տեսնվել Ձեզ և Թիֆլիս, այն ամբողջ շրջանի հետ, որն անցյալ տարի այնպես դրկարաց ընդունեց մեզ... և որին մենք սրտանց սիրեցինք (Բրյուսովը այս անգամ ևս Բաքու էր եկել կնոջ հետ—Ան. Զ. Զ. — իր նամակում գրել է Վ. Բրյուսովը Ալեուհետե հանգամանորեն թվարկելով պատճառները, որոնք ստիպում են նրան հրաժարվել Թիֆլիս մեկնելու մտադրությունից, ուստի բանաստեղծը նորից նոր հավաստում է. «Ես Ձեզ... պիտի խնդրեմ իմ այս մերժմանը վերաբերվել ներողամբությամբ և հավատալ, որ ինձ ամենից շատ վրշտ պատճառեց Ձեզ հետ տեսնվելու և նորից Թիֆլիսում լինելու հրաժարվելը: ...Անձամբ քեզ սրտանց շնորհակալություն՝ Ձեր սիրալիր ուշադրության և իմ դասախոսությունը կազմակերպելու ցանկության համար»⁷³։

Հունվարի 29-ին արդեն մամուլը հաղորդում էր, թե Վ. Բրյուսովը, որ հրավիրված էր Թիֆլիս դասախոսություններ կարդալու, Բաքվում հիվանդացել է⁷⁴։ Փետրվարի սկզբին, ամենայն հավանականությամբ, մինչև 5-ը, Բրյուսովը Բաքվից մեկնում է Մոսկվա։

ВАЛЕРИЙ БРЮСОВ В ЗАКАВКАЗЬЕ И АРМЯНСКАЯ ЛИТЕРАТУРНАЯ ЖИЗНЬ

А. А. ЗАКАРЯН

(Резюме)

Известный русский поэт В. Я. Брюсов, работавший над сборником «Поэзия Армении», 7 января 1916 г. по приглашению «Общества любителей армянской словесности» прибыл в Баку. 8 января он прочел лекцию «Армянская поэзия», имевшую большой успех у общественности города. Затем Брюсов с этой же лекцией выступил в Тифлисе (13 января), в Эчмиадзине (17 января) и Ереване (18 января). 22 января в Тифлисе поэт прочел лекцию «Исторические области Армении и развитие армянской поэзии». 24 января он отбыл в Москву. Брюсовские лекции стали важным событием в жизни армянской общественности и воспринимались с большим воодушевлением. В Закавказье Брюсов знакомится со многими деятелями армянской культуры, в частности с Иоаннесом Иоаннисианом, Ованесом Туманяном и др. Общение с ними позволило поэту уточнить свои оценки тех или иных явлений армянской литературы. В январе 1917 г., во второй свой приезд в Баку по приглашению «Общества любителей армянской словесности», Брюсов выступил с лекциями «Эмиль Верхарн и героическая Бельгия» (17 января) и «Учителя учителей (О древнейших культурах человечества)» — 24 января. Лекцию об общественных взглядах А. С. Пушкина к 80-летию со дня его смерти Брюсов прочел 29 января. В эти же дни он общается с различными слоями армянского населения Баку. Предполагаемая поездка в Тифлис не состоялась и в начале февраля поэт возвратился в Москву.

⁷² Նույն տեղում, № 581։

⁷³ Նույն տեղում։

⁷⁴ «Գաղափար», 29 հունվարի 1917։